

„ մեծացուցանել զայր որ զնա մեծա-
 „ րիցէ, և կազդուրել զթագաւոր՝ որ
 „ ի գլուխ անցեալ ժողովրդոց բազ-
 „ մաց մատչի ի պատուել զանդրին
 „ կանգնեալ վասն նորա . ուր և նո-
 „ քին իսկ որ ի վսեր ընդ նմա եկին՝
 „ ելեւել զմիմեամբք առնեն ի պաշ-
 „ պանել զյիշատակ նորա, իբր զմը-
 „ ցանակ յաղթութեան, և իբրու-
 „ զէն և զասպար . հանգոյն գողցես
 „ նահապետացն Հելլենաց որ զզէնսն
 „ Մքիլեայ առ ի միմեանց կորզէին :
 „ Հոմերական է աստանօր Կամ . ամե-
 „ նայն ինչ ահագին, Կամ ինչ զարմա-
 „ նալի է յաջ առն՝ որ դէտակն կա-
 „ լեալ ուշ ունիցի ընթացից կենաց
 „ քաջիս անդստին ի կղզւոյ անտի
 „ յորում խանձարեցան՝ մինչև ի
 „ կղզին յոր զթաղումն ընկալաւ . ար-
 „ դարե վարսամ գեղափայլ և ահար-
 „ կու, որ առ ի ծագելոյ յարեւել
 „ և յարեւմուտս առ հասարակ, ի
 „ խորոց ծովու ի վեր ամբարձեալ
 „ ի նոյն դարձ առնէ խորասուզեալ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ենցած տարւոյն հռչակք :

Եթէ մարդ բան ժողովելու հետ է,
 և ամէն տեղէ բան կը ժողովուի, ամէն
 տեղէ բան կը քաղուի . մշակը գետնէն
 կը քաղէ, հովիւը հօտէն, ձկնորսը ծռ-
 վէն, վաճառականը զանազան աշ-
 խարհքներէ, տնկագործը հողէն, հան-
 քագործը երկրիս խորունկէն, խա-
 նութպանը շուկայէն, զինուորը դաշ-
 տէն, թագաւորը ժողովրդէն, ժողո-
 վուրդը օտարներէն, հարուստը աղքա-
 տէն, աղքատը հարուստէն, իմաս-
 տունը գրքէն, տգէտը իմաստունէն,
 և այլն : Եւ այց ան յսովսոսի արծիւին
 նման՝ որ որսող կենդանին ալ որսին
 հետ մէկտեղ յանկարծ նոր որս մը
 ըրաւ, իսկնց վերուց տարաւ, մէկն ալ
 կայ որ անդադար մարդիկը խլելու

հնձելու հետ է : Ենցած իմացան որ
 ասիկայ ժամանակն է, և իր գերան-
 դին մահն է, որ ամէն կողմէ՝ ամէն
 չափէ հունձք կը ժողովէ, տարուան մը
 շալակը կուտայ, երկրիս սահմանէն
 դուրս կը հանէ, յաւիտենականու-
 թեան գաւառը կը խրկէ, ուսկից
 դառնալ չըլլար :

Ենցած տարին ալ որչափ հունձք
 տարաւ . որչափ մարդիկ տարեր է հե-
 տը : Ով կրնայ նոյն տարուան գար-
 նան մէջ բացուած ծաղկները, կամ
 նոյն աշնան մէջ թափած տերեւները
 համրել՝ որ մեռածներն ալ հաշուէ :
 Եւ աս գիտեմ որ աս ցաւալի հունձ-
 քը առատ էր, և ասոր վրայ չեմ տա-
 րակուսիր թէ ճշմարիտ չըլլայ, վասն
 զի աս հունձքը միշտ առատ կ'ըլլայ,
 ոչ չորութենէ կ'առնէ՝ ոչ անձրեւէ :
 Եւ ալ գիտեմ, և դուք ալ կրնաք գիտ-
 նալ, որ ամէն տեսակ բոյս կայ եղեր
 մէջը . մատղաշն ալ՝ աճածն ալ, նոր
 ծլածն ալ՝ ծերացածն ալ, ծաղկածն
 ալ՝ փտտածն ալ . և ամէն տեղէ քա-
 ղուած են, լեռներուն գլխէն, ձորե-
 րու ծոցէն, երկրիս խորէն, ջրի ե-
 գերքներէն, անապատ աւազուտ դաշ-
 տէն և ինչուան ծովուն սահեցուն ա-
 լիքներուն վրայ ծփած ճամբորդ տնե-
 րէն . մէկ խօսքով, թերեւս աս հունձ-
 քը անանկ ընդհանուր եղած է, որ
 հիմա սա կարգացողներուն մեծ մասը
 իրենց դաշտէն, մնացածներն ալ ի-
 րենց դրացւոյն դաշտէն տունկ մը
 խլած պակսած տեսնեն . անանկ որ
 աս յիշելն ալ ինծի անգթութիւն մը
 պիտի սեպէի, թէ որ չգիտնայի թէ
 իմ քրիստոնեայ ընթերցողներս կը
 հաւտան որ ան խլած տունկերը հի-
 մա լաւագոյն տեղ մը տնկուեր են :
 Եւ անք մեր անցած տարւոյն հնձո-
 ցը վրայ : Եւ իտենք որ անոնք ամէնքն
 ալ ան սուր և անդադար մանգաղին
 տակը մէկ կերպով կ'իյնան, և ժողով-
 ղին կապած տրցակին մէջ՝ ամենեւին
 հաւասար են . բայց մենք ադամոր-
 դիքս այնչափ երկրիս ընդունայնու-
 թեամբ մտքերնիս պղտորած ենք

որ դեռ անկէ անդիի աշխարհքին մէջ ալ զանազանութիւն կը փնտռենք . ան մեծ էր կ'ըսենք , աս պզտիկ . ան բարձր , աս ցած . ան պատուական՝ ասիկայ անարգ . անոր համար միայն մեզի բարձր երեցածներուն յիշատակը սովորութիւն եղեր է քիչ մը ատեն պահել , իբր թէ բոյս ըսածդ միայն լեռան վրայ բուսածն ըլլար , կամ թէ մարդ միայն ազնուազգին ու իշխանաւորը ու շատգէտը ըլլար : Որ ընդհակառակն՝ չէ՛ թէ մարդկանց աչքին մեծ ու բարձր երեցածները , հապա լստուծոյ աչքին մեծ երեցողները , որ են առաքինիք , միայն անոնք պէտք էր որ յիշատակուէին յիշատակարանաց մէջ . բայց եկու նայէ որ աշխարհքիս աչքը անանկ կարճատես եղեր է՝ որ միայն ինքզինքը կը տեսնէ . խատուտիկ ակնոց մ'ալ կը դնէ , որ առաքինութեան ճառագայթները կտորէլէն զատ՝ բուն արեւակն ալ չցուցնեն : Եւ սակայն մենք քրիստոնեայքս միութարենք զմեզ , որ յոյս ունինք ան ճամարտապէս մեծ ըսուելու մարդկանց անունները օր մը կենաց դպրութեան մէջ կարգալու . և որչափ պիտի ուրախանանք՝ երբոր մեր հիմակուան խեղճ՝ մութ , անյիշատակ անունը՝ հոն գրած տեսնենք փառաւոր , պայծառ , յաւիտենական :

Հիմա ուզելով աչք մը ձգել աս երկրաւոր երեւելի մարդկանց վրայ , որ անցած տարուան մահուն հունձքը կապեցին , շատերը կը փախչին աչքէս . բայց տեսածներուս մէջ թագաւորական և իշխանական տներէ կը տեսնեմ մեծ թագաւոր մը , որ ատենով Վաղղիոյ զօրավար էր՝ Յովհաննէս Արողոս Պեւնատութիւն՝ Շուէտի ծեր թագաւորը . Յովսէփ Պոնափառ թէ , Եափուէն ինքնակալին մեծ եղբայր . Սաքս Վոպուրկ Աթայի դուքսը , ուրիշ Վերմանական դաշնակցութիւն ութը դուքսեր ալ մէկտեղ : Եղբքս անդրա՝ Ռուսաց կայսեր դուստրը . Սաբիամ Վարդինա Ռուսարտիոյ կայսե-

րական փոխարքային դուստրը . () Ետենպուրկայ դքսուհին , և այլն :

Եսոնց քով կան ան մարդիկներէն ալ որ ատենով մահուան գործակալ եղեր են (արդար թէ անարդար , ան ես չեմ քններ) , որ հիմա իրենք ալ մահուան ձեռք ընկեր են . ասոնք են զօրապետները , ինչպէս Տիմիթրի Ալալիցին Ռուսաց զօրավար , Տրուէ Տէլլոն գաղղիացի , և այլն :

Ետենակալներ , պալատականներ , պաշտօնեաներ , խիստ շատ . որոնց մէջ մեծ ցաւով կը յիշեմ իմ արդիւնաւոր համազգիս ալ՝ Եուսուֆեան Պօղոս պէյը : Ռուսումնականաց խուրձին վրայ նայած ատենս , չեմ գիտեր ինչո՞ւ սիրտս աւելի կը խըշխըշայ . հոն ալ մեծ ծաղկաքաղ կը տեսնեմ . Վարդուս Վոտիէ գաղղիացի բանասէր ու բանաստեղծը . Ռոման Վէմիպէլ անգղիացի անուանի բանաստեղծը . Եաւարէթ սպանիացի պատմիչը , Վրիլով Ռուսաց մեծ առակախօսը , Սիբալի բանասէրը , Ռոյ գաղղիացի բանաստեղծը՝ որ ամբողջ դարու մը հունձք տեսեր էր , վեց տարի ալ աւելի . բայց անկէ հինն ալ կայ՝ Տիւսերբէլ գրականը՝ 114 տարուան հընձուած . Պլում Պրուշ թատերագիր , որ 589 թատերական խաղ և 162 երաժշտական խաղ շինեց , Պիւրնոֆ Վաղղիոյ ճեմարանին երեւելի ընկերը , հետն ալ Սիւլլովիլ և Ֆորիէլ . Դոֆրուա Սէնթ-Լէր հռչակաւոր բնապատումը , հետն ալ Տարսէ բնախօսը :

Երուեստաւորաց մէջ չեմ կրնար չիշել Ռորվալտսէն մեծ արձանագործը , և Վամուլլինի նկարիչը :

Եկեղեցական գնդէն կը տեսնեմ արցունքով շատ պատուական հովիւներ որ իրենց ոչխարներուն ետեւէն վերին փարախը մտան . այսպէս չորս պատկառելի ծիրանաւորներ , Փաքթա . Վրոյ , Պուսսի և Վարաչիոլոյ . չորս մեծ արքեպիսկոպոս , և վեց եպիսկոպոս՝ միայն Վաղղիայէն . ընտիր քահանայք , հոգեսէր քարոզիչք ,

պատճառական կրօնաւորք՝ համբանքէս կ'անցնին . իսկ ռամիկ և հասարակ ըսուած ժողովրդէն՝ համբելը աւելորդ կը սեպեմ :

Տարուէ տարի ասանկ հունձեր տեսնելով, մտքէս շատ մտածմունքներ կ'անցնին . ասոնցմէ մէկ երկուքը ըսեմ, որ կարգացողը հետաքրքրու թեամբ նայելով՝ վրայ բերէ, թէ իմ մտքէս ալ կ'անցնին ատոնք :

Ա . Սէյմը, թէ աս ինչ անթիւ հունձք է, և աս ինչ արագութեամբ երկրիս երեսէն անցնիլ է : Ստածմունքս չեմ երկընցըներ, դու հետեցուր :

Բ . Ես ինչ տեսակ բաղդ է մահը՝ որ ամէն վիճակ իրարու կը հաւասարցընէ . Շուետի թագաւորն ալ, կայսերաց ազգակիցներն ալ, մուրացկաններուն տնանկներուն հետ հաւասար իջեալ մը կ'երթան գերեզմանը, և խռով չեն :

Գ . Ինչ զարմանալի բան է որ Սէնթ-Վէրի ու Պիւրնուֆի պէս հետաքնին իմաստնոց հաւասար՝ տըգէտ գեղացին ալ կ'ելլէ աշխարհքէս, և երկուքին աչքն ալ մէկտեղ կը բացուին բուն ճշմարտութիւնը տեսնելու :

Դ . Ես ինչ աննման պատահմունք է հասակաց, որ Տիւսէրքը 114 տարուան զառամին հետ՝ քանի մը տարուան, քանի մը օրուան, քանի մը ժամուան տղաք ալ ուղեկից կ'ըլլան, որ հազիւ շունչ մը ձգեցին երկրիս վրայ, հազիւ օրուան արեւը տեսան ու անկէ շուտ վար իջան :

Ե . Լսչափ մեռածներու վրայ՝ ծնողք, ազգականք, սիրելիք, ինչ յոյսեր ունէին, ինչ ցաւեր ունեցան . քանի ծիծաղկոտ երեսներ արցունքի լիճ դարձան . քանի ցեղերու ճրագներ մարեցան, և այլն և այլն :

Զ . Հապա աս մեր երկրէն ելողները հիմա ուր են . անոնց մարմինը ամէնքը հաւասար մէկ հող է ոտուըներնու տակը . բայց հողինին . հասան արդեօք իրենց բուն յաւիտե-

նական վախճանին, թէ . . .

Է . Սերջապէս ասոնց նման շատ բաներ ալ մտածելէն ետեւ, հոս կը լմընցընեմ, թէ ես ալ մէկ հունձ մըն եմ . անցած տարուան հունձերէն բաղդով խալեցայ, բայց կարելի է թէ աս տարուան տրցակին մէջ իմ տեղս ալ պատրաստած է . և թէ աս տարի ալ չըլլայ, ուրիշ վազուկ տարի մը պիտի դայ շուտով՝ զիս ալ պիտի խլէ, իր հազար հունձերուն մէջ պիտի խառնէ, առնէ տանի . ես ալ անցած գնացածներէն մէկը պիտի ըլլամ : Եւ ամանակակիցքս կամ յետագայք զիս պիտի յիշեն թէ չէ՝ չեմ գիտեր, չեմ ալ հոգար : Սիայն նայիմ որ անանկ հունձ մը ըլլամ, որ հոս մարդկանց աչքին տակը չիյնամ ալ նէ՝ հոն իմ տնկողիս ու ստեղծողիս ու իր արիւնովը զիս փրկողիս աչքին հաճոյ բան մը ըլլամ . ան ալ իր շնորհքովը և ողորմութեամբը, որն որ կը փափաքիմ նաեւ իմ ամէն բաղդակից և ուղեկից ընկերացս և ընթերցողաց :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երեւի :

ԶՈ՞ համբէն 'ի մարդիկ

Համարիցիս երջանիկ :

Զբաղմեալն 'ի գահ մեծասպաս ,

Յոսկի թաթաւ ըզՍիգան ,

Որ փափկասուն պերճաշուք

Գրգռի բաղդին ընդ թեօք .

Թէ զհանձարեղն այր զիմաստուն խորագէտ ,

Որ զծով զերկիր զերկինս չափէ յիւրն 'ի մէտ .

Կամ զաշխարհի տէր զգոռ մարտիկ

Յոյր 'ի գրեկաց տեղան շանթիք : —

Չեն չեն դոքա երջանիկք ,

Այլ Բաղդին հէք խաղալիկք : —

Բայց որ ընդ իւր գոհ վիճակ ,

Երկնից կամայն հրպատակ ,

Չերեսանակ սանձէ ըզկրիցն 'ի յանդորր ,

Ոչ զըղանայ ընդ երկեան գործն այսօր .

Ոչ 'ի խրդձին 'ի խայթոցաց ընդոստնու ,

Ոչ չըւայտեալ 'ի փափկութիւնս նինջ առնու :

ՓԵՆԱՌ ՔԵՐԵՂ ԳԱՂԷՆՈՒՆ :